



06.11.2025

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՍԻ «Բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի ձևավորման չափանիշները Երևան քաղաքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է Ժ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Թեմայի արդիականությունը

Ատենախոսության թեման նվիրված է Երևան քաղաքի տարածքներում բազմահարկ բնակելի շենքերի անկանոն կառուցապատման և բնակչության բարեկեցիկ կենսամիջավայրը խաթարող ակնառու երևույթների զայման խնդիրներին: Հին բնակատեղիի ձևավորումը որպես մայրաքաղաք սկզբնավորվեց 20-րդ դարասկզբին, երբ ստեղծվեց ՍՍՀԱ-ն և ձեվավորվեց տնտեսության միաբեկո կառավարման պետական համակարգ, որը և հանդես եկավ որպես քաղաքաշինության բնագավառի ֆինանսավորման և վերահսկման բոլոր գործառույթների միակ պատվիրատուն: Կազմվեց քաղաքի կառուցապատման զիսավոր հատակագիծը, սկզբնավորվեց բնակելի և հասարակական շենքերի ու շինությունների համատարած նախագծման և կառուցապատման գործընթացը: Նորակառույց բնակելի ֆոնդը բաշխվում էր բնակիչներին անհատույց, բնակչության բոլոր խավերի սոցիալական հավասարության սկզբունքներով և ընտանիքի յուրաքանչյուր անդամին նորմավորված բնակմակերեսի տրամադրման հաշվարկով: Երթեվեկելի փողոցներում տեղակայված գրեթե բոլոր բնակելի շենքերի առաջին հարկերը, որպես կանոն նախագծվում և ծառաեցվում էին բնակչության տնտեսական և առաջնախն այլ կարիքների սպասարկման պահանջները բավարարելու նպատակներով: Արդյունքում ընդամենը հինգ տասնամյակների ընթացքում մայրաքաղաքի կենտրոնը, իր երեք-չորս հարկանի շենքերի ու շինությունների ծավալատարածական կառուցվածքով ու հրապուրիչ կերպարներով, հիրավի ներկայացավ իբրև ազգային մշակույթի դիմագիծ:

60-ականներին բնակարանային շինարության պահանջարքի կտրուկ աճի հետևանքով բազմահարկ բնակելի շենքերի նախագծման քաղաքականությունը կտրուկ փոխարինվեց տիպային միատիպ շենքերի նախագծմամբ ու թաղամասերի միատարր ու անհրապույր կառուցապատմաբ։ Քաղաքի կենտրոնի կառուցապատման ավարտուն կերպարը խաթարումներից զերծ պահելու նպատակով, որոշվեց նոր տիպային շենքերով բնակելի թաղամասերը տեղակաել քաղաքի կենտրոնին հարակից և կառուցապատումից ազատ արվարձաններում։ Արդյունքում գոյացան ննջարանային անհրապույր բնակելի միկրոշրջանները։

1990-ական թվականներին ՍՍՀ Միության համակարգը փլուզվեց և անկախացած Հայաստանում մեկնարկեց շուկայական տնտեսավարման հանպատրաստ գործընթացը։ Հանրապետության մեկուսացման արդյունքում դադարեցին գործել արթյունաբերական երթեմնի հզոր գործարանների գործառույթները և տնտեսավարման միակ ոլորտները մնացին սննդարդյունաբերությունը, մանրածախ առևտուրը, բնակչության կարիքների սպասարկման ծառայությունները և իհարկե գոյություն ոնեցող բնակելի շենքերի կցակառուցումներն ու մանսարդային հարկերի անկանոն հավելումները։

21-րդ դարասկզբին մի քանի մեծահարուստ ներդրողների նախաձեռնմամբ Երևանում սկզբնավորվեց բարձրահարկ բնակելի և հասարակական շենքերի կառուցման գործառույթը, որի առաջիններից էր հանրային քննադատությանն արժանացած հյուսիսային պողոտայի ձեւավորումը բազմահարկ և նորավոճ բնակելի շենքերով, քանզի ծավալատարածական առումով այն համահունչ չեր շրջակա արդեն իսկ ձեւավորված միջավայրին։ Նորակառույց շենքերի հարկաբաժիններից շատերում բնակարանները տեսական ժամանակ չունեցան պահանջարկում հասանելիության կամ անբավարար բարեհարմարության հետևանքով։ Շուկայական տնտեսավարմամբ զարգացած երկրներում բազմահարկ բնակելի շենքերը նախագծվում և կառուցվում են ըստ նրանցում առկա բնակարանների բարեհարմարության ցածր, միջին, բարձր և այլ դասակարգիչներով ու տեղակայվում բնակավայրի իրենց դասակարգիչներին համապատասխանող հողատարածքներում։ Բնականաբար նման տարանջատումներով ցածր դասակարգի շենքերում, բնակարանների ընդհանուր մակերեսները պետք է բավարարեն գործող նորմերի նվազագույն պահանջները, իսկ մնացյալ դասակարգերում ըստ պատվիրատուի ցանկության, բարեհարմարության նորմատիվ այլ չափորոշիչներով։

Ատենախոսության ներածությունը

Ատենախոսության նպատակն է

Երևան քաղաքի պայմանների համար, նախագծման վրա ազդող գործոնների ու չափորոշիչների հետազոտմամբ բազմաբնակարան շենքերի

ծավալահատակագծային դասակարգչի մշակումն ու հիմնական դասակարգիչների և դրանց չափորոշիչների համեմատության գիտականորեն հիմնավորված առաջարկությունները:

Հետազոտության գիտական նորամուծությունն է արդի բնակարանային շուկաի բացահայտված նախադրյալները, որոնք նպաստում են դասակարգիչների ներդրմանը արդի բնակարանային շուկայի պայմաններում:

Հայաստանում հետազոտական ժամանակաշրջանի բնակարանային շինարարության զարգացման առաջարկվող տարեգրությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտել և պարզեցնել բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման առջև ծառացած խնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում,

Դասակարգիչների հիմնական չափորոշիչների ձևավորումը, դասակարգչի ձևավորման գիտականորեն հիմնավորված առաջարկության կազմումն ու ներդրումը բազմաբնակարան բնակելի շենքերի նախագծման գործառույթներում:

Առաջին գլխում (Էջ 72-109) ներկաքցվում է բազմաբնակարան բնակելի շենքերի ծավալահատակագծային լուծումների վերլուծությունը, ըստ բարեհարմարության կատեգորիաների, որը թույլ կտա նախագծողներին և պատվիրութուններին հստակ նշել օբյեկտի հիրեարխիան քաղաքի հատակագծային կառուցվածքում և համապատասխանեցնել բնակարանային շուկաի գնային քաղաքականությանը: Նշվում է նաև, որ դասակարգչի ներդրմամբ գնորդը հնարավորություն կունենա ընտրել իրեն հետաքրքրող ու հասանելի անշարժ օբյեկտը: Ելնելով դրվագ նպատակից հետազոտված են նաև գործոններն ու չափորոշիչները, որոնք ազդեցություն կունենան Երևանում բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգիչների ձևավորմանը: Մանրամասնորեն ներկայացված են նաև արտերկրներում դասակարգիչների ձևավորման փորձը:

Երկրորդ գլխում (Էջ 72-109) հետազոտվել է Երևան քաղաքի 1991-2020թթ ժամանակաշրջանի բազմաբնակարան բնակելի շենքերի տիպաբանության վրա ազդեցություն ունեցած հիմնական գործոնները: Դիտարկված են նաև բազմաբնակարան բնակելի շենքերի զարգացման փուլերը, քաղաքի կառուցվածքում դրանց տեղակայման ու ճարտարապետական նորարական լուծումների առանձնահատկությունները, քաղաքի կենտրոնում հին բնակչության դրանց տեղակայման ու ճարտարապետական նորարական լուծումների համար առանձնահատկությունները, բնակելի կառուցվածքում զարգացումները քաղաքի արվարձաններում, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետա-հատակագծային լուծումների վրա ազդեցություն ունեցող քաղաքաշինական, սոցիալ-ժողովրդագրական, բնակլիմայական, տնտեսական, ինժեներատեխնիկական և գեղագիտական գործոնները:

Երրորդ գլխում (էջ 110-137) ներկայացված է Երևանում բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգիչ, որում ներառված են բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգման և Երևան քաղաքի համար դասակարգիչի մոդելը, որում ներառված են 8 գործոններ և 70 չափորոշիչներ:

Հետազոտությունում նշվել է նաև, որ Հայաստանում հասարակարադարձական կառավարման ռեֆորմից հետո Երևանում գոյանում էին մասնավոր ձարտարապետական արվեստանոցներ, որոնք որպես կանոն գործում էին պատվիրատունների թելադրանքով, իսկ քաղաքի տարբեր մասերում հնացած բնակչութիւնի իրացումը նոր կառուցապատումների ձևավորման համար, ուղղված էր ոչ թե քաղաքում բարեկեցիկ միջավայրի ձևավորմանը, այլ բիզնես-շահի ապահովմանը, ինչը և հանգեցրեց անշարժ գույքի շուկաի ձևավորման ներկայիս քառային վիճակին:

Հետազոտությունում օգտագործված են նաև թեմային վերաբերվող բազմաթիվ հրապարակումներ, գիտական հոդվածներ, որոնց ցանկը բերված է վերջնամասում:

Եզրակացություն

Վիկտորիա Պատվականի Ռոկանյանի «Բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի ձևավորման չափանիշները Երևան քաղաքում» թեմայով ատենախոսությունը անվիճելիորեն հանդիսանում է ձարտարապետության ոլորտում պահանջված գիտական հույժ կարևոր ուսումնասիրություն, լիովին համապատասխանում է գիտական աստիճանի շնորհման կարգի պահանջներին և հայցվորը արժանի է ոչ միայն ԾՀ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտուցյամբ գիտության թեկնածուի աստիճանի շնորհման, այլ նաև ատենախոսության հիմնարար թեզերի անհապաղ կյանքի կոչման իր հետագա գործառույթներում լիարժեք խրախուսման ու օժանդակման: Հուսով ենք նաև, որ Երևանի համար մշակված սույն դասակարգիչների սկզբունքները առաջիկայում կտեղայնացվեն նաև Հայաստանի մնացյալ քաղաքների համար:

Ս.Հ.ՔԱՂԱՇՅԱՆ
«Հայնախագիծ»ԲԲ ընկերության
ճարտարապետական արվեստանոցի ղեկավար,
ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր,
ՀՀ վաստակավոր ճարտարապետ